

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ



THE ARMENIAN PRELACY  
OF AMERICA

156 Fifth Avenue, New York, N. Y.

*ի Քաղաքի Առաջնորդարանի  
Էջմյուսի Եպիսկոպոսի  
Ռեզիդենսի Երևանի - Ռեզիդենսի*

Telephone: CHelsea 3-1791

Շ Ր Չ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՎԻՃԱԿԻՍ  
ԳԵՐ. ԵՒ ԱՐԺ. ՀՈՎԻԻՆԵՐՈՒՆ ԵՒ  
ՊԱՏ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ.

Մեր ստանձնած դժուարին պաշտօնի կատարման մէջ ամենէն  
ծանր եւ նեղացուցիչ մասն է մեզ համար հարկադրուած  
ըլլալ պարբերաբար դիմելու Պատ. Հոգաբարձութեանց որպէսզի  
հաճին անթերի նատարել: Առաջնորդարանիս հանդէպ իրենց  
ստանձնած յանձնառութիւնը:

Առաջնորդարանիս ծախքերը նուազեցնելու համար մեր բոլոր  
ջանքերը ի գործ դրած ենք եւ ոչ մէկ շրջանի մէջ Առաջ-  
նորդարանի պիտոճէն եղած է այնքան նուազ որքան այսօր:

Եւ հակառակ այս զոհողութեան դեռ կը տառնապիտք առօրեայ  
ծախքերն եւ շէնքին վարձքն իսկ բաւարարելու որովհետեւ  
հոգաբարձութիւնք անհոգ եւ անփոյթ կը գտնուին իրենց  
պարտականութեան կատարման մէջ:

Այս բացառիկ ծանր շրջանին մէջ, երբ Հայ Եկեղեցւոյ Հեղի-  
նակութեան հանդէպ դաւեր կը նիւթուին ուխտեալ թշնամի-  
ներու կողմէ, եւ ամէն անագնիւ միջոցներու կը դիմուի  
Առաջնորդարանի գործունէութիւնը դժուարացնելու եւ խա-  
փանելու համար, կը յուսաինք որ մեր հաւատարիմ եւ բարե-  
կամ հոգաբարձութիւնք պիտի ջանային օժանդակել մեզի գէթ  
նիւթական հոգերէ ազատ պահելու համար մեզ, դժբաղդաբար  
սակայն այս ակնկալութեան մէջ յուսախար եղանք մեծ  
մասամբ:


Մեզ անծանօթ չէ տիրող նիւթական դժուարութիւնը եւ հոգա-  
բարձութեանց ալ ենթարկուած անձուկ վիճակը: Բայց նկատի  
ունենալով Առաջնորդարանը սահմանուած շնչին գումարը,  
համեմատութեամբ իրենց հատուցից ու ծախուց, պարզապէս  
մենք բարի կամեցողութեան պակաս միայն կը նկատենք. հո-  
գաբարձութեանց մեծ մասին տեւական եւ մէկ մասին պարբե-

րաբար ցոյց տուած զանցառութիւնը ի մասին իրենց թե-  
մական տրոց ճշդիւ գործադրութեան:

Մենք այս կողով անգամ մըն ալ կը դիմենք Պատ.հոգաբար-  
ձութեանց յիշնջնելու սահմանադրապէս գծուած իրենց  
պարտականութեան գործադրութիւնը եւ յայտնելու ԲԱՑՈՐԱ-  
ՇԱՊԷՍ թէ այս վիճակի շարունակութիւնը յառաջ պիտի բերէ  
Առաջնորդարանի փակումը, որուն ծանր պատասխանատուութիւնը  
չենք ուզեր ստանձնել:

Ստիպողաբար կը յանձնարարենք որ հաճիք անմիջապէս փո-  
թացնել Ձեր յետնեալ պարտքերը եւ ներկայ տարւոյս ալ  
Առաջնորդական տուրքերը առ Դեկտեմբեր 31, 1935:

Հայրական օրհնութեամբ



Առաջնորդական Տեղապահ Հայոց  
Ամերիկայի

Դեկտեմբեր 21, 1935